ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴԱՎԹՅԱՆ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՅՈՒՐԻԻ

ԺԱՄԱՆԱԿԸ ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ՊԱՏՄԱՎԵՊԵՐՈՒՄ

Ժ. 01.02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մարտին Գարեգինի Գիլավյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սամվել Պարգևի Մուրադյան**

բանասիրական գիտությունների թեկնածու **Ռիմա Մամիկոնի Ստեփանյան**

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. նոյեմբերի 27-ին՝ ժ. 12^{30}-ին, ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտում գործող Հայ և արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. հոկտեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների թեկնածու՝ Ս.Ա.Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքը նվիրված է Սերո Խանզադյանի պատմավեպերում ժամանակի կատեգորիայի բնութագրմանը: Քանի որ ժամանակն ու տարածությունը անքակտելիորեն կապված են միմյանց հետ, ատենախոսության մեջ փորձել ենք Ս.Խանզադյանի պատմավեպերում ներկայացնել նրանց միասնականությունը, որն ունի ոչ միայն բովանդակային, այլև ձևակառուցվածքային գործառույթներ և իր ազդեցությունն է թողնում կոմպոզիցիայի ու սյուժետային շղթայի կառուցվածքի տրամաբանության վրա:

Ս.Խանզադյանի պատմավեպերում ժամանակի համապատկերը, մի դեպքում «խտացվում է մեկ պահի մեջ՝ամփոփելով մեծ ժամանակաշրջանի բովանդակությունը>>, մի այլ դեպքում երկարացվում՝ «տալով մեկ ակնթարթում կատարված դեպքերի համակողմանի ուսումնասիրությունը»:

Անդրադառնալով պատմական որևէ կոնկրետ ժամանակաշրջանի՝ գրողն անցյալում կատարված մեծ ու փոքր իրադարձությունները փորձում է ներդաշնակել ներկայում ընթացող դեպքերին, գեղարվեստական տարածություն ներմուծել պատմական անցյալի այն դրվագներն ու երևույթները, որոնցում պահված պատմամշակութային ու բարոյահոգեբանական արժեքները , անցյալում իրենց համար ճանապարհ հարթելով, աշխատում են այսօրվա համար:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ժամանակը Սերո Խանզադյանի պատմավեպերում» թեման արդիական է այն առումով, որ հնարավորություն է տալիս բացահայտել՝

1. Ժամանակի կատեգորիայի յուրահատուկ դրսևորումները գրողի պատմավեպերում:
2. Ժամանակի և տարածության միասնականությունը և նրա խանզադյանական ընկալումները:
3. Ամբողջացնել անվանի գրողի ստեղծագործական դիմանկարը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան Ս.Խանզադյանի պատմավեպերն են:

Ոսումնասիրության նպատակն է Ս.Խանզադյանի պատմավեպերում ներկայացնել ժամանակի կատեգորիան, ժամանակի ու տարածության անքակտելի միասնականությունը:

Ուսումնասիրության խնդիրն է մերօրյա տեսանկյունից իմաստավորել պատմության փիլիսոփայության ու դասերի խանզադյանական մեկնությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ս.Խանզադյանի ոչ միայն պատմավեպերը, այլև ողջ ստեղծագործությունը ցայսօր չեն արժանացել համակողմանի ուսումնասիրության: Գրողի ստեղծագործություններին, ճիշտ է, ժամանակին անդրադարձել են անվանի գրականագետներ Հր.Թամրազյանը, Ս.Աղաբաբյանը, Ս.Արզումանյանը, Լ.Հախվերդյանը, Ս.Սարինյանը, ինչպես նաև Թ.Պետրոսյանը, Վ.Աղաբաբյանը, սակայն նրանք ընդհանրության մեջ չեն

արժևորել Ս.Խանզադյանի ստեղծագործությունը, պատմավեպերի յուրահատկությունները: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ փորձ է արվում Ս.Խանզադյանի պատմավեպերը արժևորել մերօրյա աշխարհաքաղաքական զարգացումների համապատկերում, ցույց տալ դրանցում արծարծված գաղափարների արդիականությունը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրության մեթոդաբանության հիմքում ընկած է Ս.Խանզադյանի պատմավիպասանության համակարգի ամբողջական ընկալման, ուսումնասիրվող նյութի համադրման սկզբունքը: Ատենախոսության մեջ բացահայտվում ու վերլուծվում է կոնկրետ ժամանակաշրջանում գրողի պատմավեպերում արծարծվող հիմնական թեմատիկան: Օգտագործել ենք նյութի ժամանակագրական, բնագրային, համադրական վերլուծության մեթոդները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքն ունի ճանաչողական նշանակություն՝ պայմանավորված նյութի արդիականությամբ ու թեմատիկ բազմազանությամբ:Այն օգտակար կարող է լինելինչպես բանասիրական ֆակուլտետի ուսանողների, ուսուցիչների, Ս.Խանզադյանի ստեղծագործությունն ուսումնասիրողների, այնպեսէլ «Նորագույն շրջանի հայ պատմավեպը» մագիստրական հատուկ դասընթացի համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը կատարվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, քննարկվել և հավանության է արժանացել համալսարանի Հայ նոր և նորագույն շրջանի գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում և երաշխավորվել է պաշտպանության:

Ատենախոսությունը հրատարակվել է առանձին մենագրությամբ, նրա առանձին դրույթներ հրապարակվել են ԲՈՀ-ի կողմից ընդունելի ամսագրում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, արդիականությունը, գիտական նորույթը, մշակվածության աստիճանը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ԱԼԻՔԸ
Ա/ Ազգային ինքնության վերահաստատման ճանապարհին

1950-ականների կեսերից սկսած պատմության նկատմամբ համաժողովրդական հետաքրքրության աճը, - ինչպես գրում է գրականագետ Ս. Պետրովը, - պայմանավորված էր «հասարակական հոգեբանության մեջ կատարվող տեղաշարժելով, ժամանակների կապի վերականգնման պահանջի սրացումներով»[1], ինչի հետևանքով «պատմությունը, պատմական հիշողությունը, ժողովրդական բնավորության պատմական արմատները բառացիորեն իշխեցին 1960-ականների և 1970-ականների գրական մտքի վրա»[2]:

Այդ տարիներին լույս տեսան հայ ժողովրդի պատմական անցյալին նվիրված տասնյակ վեպեր ու վիպակներ՝ Ստ. Զորյան «Վարազդատ», Մ. Արազի «Իսրայել Օրի», Գ. Մահարի «Այրվող այգեստաններ», Զ. Դարյան «Արծիվ Վասպուրականի», «Սայաթ Նովա», Ս. Այվազյան «Ճակատագիրն հայոց», Ստ. Ալաջաջյան «Եղեգները չխոնարհվեցին», Հր. Քոչար «Նահապետ», «Սպիտակ գիրք» և այլն:

«Ճակատային գրոհը» շարունակվեց 1970-80-ական թվականներին Հ. Խաչատրյան «Էրեբունի», «Տիգրան Մեծ», «Արտավազդ», Պ. Զեյթունցյան «Արշակ Երկրորդ», «Արծաթե դար», Վ. Գրիգորյան «Դար կորստյան» և այլն:

Պատմության թեման Ս. Խանզադյանին հոգեհարազատ է եղել դեռևս ստեղծագործական առաջին քայլերից:

Անդրադառնալով պատմական որևէ կոնկրետ ժամանակաշրջանի՝գրողն անցյալում կատարված մեծ ու փոքր իրադարձությունները փորձում է ներդաշնակել ներկայում ընթացող դեպքերին, գեղարվեստական տարածություն ներմուծել «պատմական անցյալի այն դրվագները ու երևույթները, որոնցում պահված պատմամշակութային և բարոյահոգեբանական արժեքները, անցյալում իրենց համար ճանապարհ հարթելով, աշխատում են այսօրվա համար»[3]:

Ճիշտ ժամանակին հղացված ու գրված «Մխիթար Սպարապետ»-ի գործողությունները տեղի են ունենում 18-րդ դարի առաջին քառորդում, երբ հայկական ազատագրական շարժումները նոր թափ ստացան ու մտան զինված պայքարի շրջան:

Վեպում ծավալվող գործողությունների ընթացքը հեղինակը ներկայացնում է ժամանակային երկու պլանով: Վիպական գործողությունների ներկայում Սյունյաց աշխարհում և Արցախում Հայոց պետականության վերականգնումն է Դավիթ Բեկի և Մխիթար Սպարապետի կողմից, ովքեր, համախմբելով ցաքուցրիվ ուժերն ու վերջ տալով, թեկուզ ոչ ամբողջությամբ, ներիշխանական տարածայնություններին, վերականգնում են պետականությունը, Հալիձոր մայրաքաղաքում ստեղծում պետական կառա-

---

[1] Петров С., Русский советский исторический роман, М., 1980, стр. 456.
[2] “Вопросы литературы”, М., 1980, № 7, стр. 60.
[3] Եփրեմյան Վ., Զգրված գրքի ծանոթագրություններ, Երևան, 2008, էջ 9:

վարման ինստիտուտներ, կազմավորում միասնական հրամանատարության ենթակայության տակ գտնվող բանակ՝ իր ենթակառուցվածքներով:

Վիպական գործողությունների անցյալը ներկայացվում է պատմական էքսկուրսների միջոցով. անդրադարձ է կատարվում հեռավոր և ոչ հեռավոր անցյալի իրադարձություններին՝ պարսկաթուրքական տիրապետության հաստատում Արարատյան և մի շարք այլ գավառներում, փառահեղ հերոսամարտեր ու հոգևոր մաքառումներ և այլն: Գործողությունների շղթան ներկայացվում է ժամանակային որոշակի հաջորդականությամբ՝ պայմանավորված կոնկրետ ժամանակաշրջանի յուրահատուկ գործոններով: Պատմական էքսկուրսները զուգադրվում են ներկայում տեղի ունեցող դեպքերին ու իրադարձություններին, տեսանելի դարձնում ժամանակի շարժման անընդհատությունը, պատմական առաջընթացի շարունակակա-նությունը:

Իրադարձությունները եթե ոչ նույնությամբ, ապա մոտավոր նմանությամբ կրկնվում ու հաջորդում են իրար: Այդ ընթացքի համապատկերում ուրվագծվում էր «Ճանապարհն հայոց»-ի համապատկերը, որի ընդհանուր ֆոնին էլ ձևավորվում են վիպական գործողությունները, կերպարների բնութագիրը:

Ժամանակն ու գործողությունների ծավալման տարածական սահմանները որոշիչ դեր են կատարում կերպարների բնավորության ձևավորման համար, մշակում են աշխարհընկալման յուրահատուկ սկզբունքներ: Դա ցայտուն կերպով երևում է վեպի հետագա ողջ ընթացքում: Հատկապես այն դրվագներում, երբ հեղինակը ներկայացնում է Սյունիքի և Արցախի զորագնդերի վարած մարտերը, նրանց հերոսականությունը, անկոտրում ոգին:

«Մխիթար Սպարապետ»-ում Ս. Խանզադյանը, վիպական ժամանակի տևականության մեջ ընդգծելով ժողովրդի կենսասիրության ձգտումը, փորձում է նախ՝ հասնել պատմաշրջանի «բազմեզր» ըմբռնման և երկրորդ՝ կոնկրետ ժամանակահատվածում ներկայացնել պատմական կերպարներին՝ նրանց բնութագրելով ըստ «Ճանապարհն հայոց»-ի ընտրության իրենց ընկալումների, որոնք էլ ընկած են գլխավորից սկզբնավորվող ու ճյուղա-վորվող տարբեր կոնֆլիկտների ու բախումների հիմքում:

«Մխիթար Սպարապետ»-ում տարածության և ժամանակի փոխ-հարաբերությամբ է պայմանավորված Ս. Խանզադյանի գեղարվեստական մտածողության կառույցը, նրա աշխարհայացքի, փիլիսոփայական ընդգրկումների շրջագիծը: Ժամանակը դարձնելով գեղարվեստական ընկալման առարկա՝ գրողը պատմական կերպարների կողքին ավելացնում է նաև գրական կերպարներ, որոնցից շատերը, թերևս, ավելի ավարտուն ու լիարժեք են:

Պատումի ողջ ընթացքում դեպքերն ու իրադարձությունները զար-գանում են ժամանակի շարժմանը զուգահեռ: Ս. Խանզադյանն անընդհատ շեշտում է կոնկրետ ժամանակահատվածը, որի ընթացքում փոփոխվում են իրավիճակներ ինչպես Հայաստանում, այնպես էլ վիպական գործողությունների հետ կապված այլ վայրերում:

Դավիթ Բեկի կերպարը Ս. Խանզադյանը ներկայացնում է երկու զուգահեռներում՝ ժամանակ – հերոս, պատմություն – հերոս գծերի

համադրմամբ՝ յուրահատուկ կապ ստեղծելով իրադարձությունների ծավալման գեղարվեստական ներկայի ու պատմական անցյալի միջև: Այդ զուգահեռներից առաջինում Բեկը ներկայանում է որպես անհատականություն, որը չունի անձնական կյանք, անձնական հետաքրքրություններ, իսկ երկրորդում՝ պետական-քաղաքական ու ռազմական գործիչ, որն ընդունակ է ճիշտ ժամանակին հայտնվել ճիշտ տեղում, կայացնել ճիշտ որոշումներ, գտնել ոչ միայն թշնամիների, այլև իր զորապետերի համար անակնկալ լուծումներ:

Դավիթ Բեկի համար խիստ բնորոշ է ժամանակի սրված զգացողությունը: Նա հրաշալի գիտակցում է, որ աշխարհաքաղաքական անկանխատեսելի զարգացումները, տարածաշրջանի նկատմամբ գերտերությունների հետաքրքրություններն ու նկրտումները թելադրում են խաղի նոր կանոններ, և ազգային շահերը թելադրում են մշակել այդ կանոններին համապատասխան քաղաքականություն:

Պատմական անցյալ – ներկա - ապագա զուգահեռներում Բեկը մտորում է ազգապահպանության հարցերի շուրջ: Նա քաջ գիտակցում է, որ երկրի հզորությունը միայն զենքի տակ պահվող զորքի քանակով չէ պայմանավորված: Իր զորքերը փառավոր հաղթանակներ են տարել, դա շատ կարևոր ու ոգևորիչ է, բայց պետք է մտածել նաև վաղվա օրվա մասին, որովհետև մեր գիրն ու մշակույթն են եղել նաև մեր գոյատևման կարևոր կռվանները: Դավիթ Բեկի ու Մովսես աբեղայի զրույցի, նրա՝ նկարիչ Հակոբ Հովնաթանյանի նկատմամբ ցուցաբերած ակնածալից վերաբերմունքի միջոցով Ս. Խանզադյանն ավելի է խորացնում զորավարի կերպարը. «Փոթորիկը կանցնի, Մովսես: Շատ փոթորիկներ են անցել հայ ժողովրդի գլխով: Այս էլ կանցնի… Ես հավատում եմ մեր ժողովրդի վաղվա օրվան… Մենք քեզ հետ միասին բաց կանենք Գրիգոր Տաթևացու դպրոցը, որ հիմնարկել է նրա ուսուցիչ Հովհան Որոտնեցին, որ խափանված է սակայն մեր աշխարհի ու մեր թշնամիների ձեռքով… Մեր հայրենակիցները հեռավոր աշխարհում գրքեր են տպագրում: Նրանց կբերենք մեր լեռները: Կնորոգենք խափանված դպրոցը և քեզ հետ միասին լույս տվող մի փոքր օջախ կհիմնենք մեր մթամած լեռներում» (2-րդ, 140):

Բ) ՊԱՅՔԱՐԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Դավիթ Բեկի մահվանից հետո սկսվում են նոր ժամանակներ, դեպքերն ու իրադարձությունները՝ ժամանակի շարժմանը զուգընթաց, ծավալվում են նոր ուղղություններով, ընդգրկում աշխարհագրական նոր տարածքներ:

Վիպական գործողությունների յուրաքանչյուր նոր ժամանակահատվածում անսպասելիորեն փոխվում են իրադրությունները, ավելանում են սյուժետային նոր ճյուղավորումներ, ընդլայնվում են տարածական ընդգրկումների սահմանները, գործողությունների ընթացքի մեջ են ներառվում նոր կերպարներ, ուրվագծվում են «Ճանապարհն հայոց»-ի նոր հանգրվանները:

Ժամանակային որոշակի հաջորդականությամբ, ներկայացնելով գործողությունների ծավալման ընթացքը, իրադրությունների փոփոխման պատճառահետևանքային կապերը՝ Ս. Խանզադյանն աստիճանաբար կենտրոնանում է Մխիթարի կերպարի վրա, խորացնում այն:

Մխիթար Սպարապետը նոր ժամանակների ազատագրական պայքարի փիլիսոփայության կրողն է:

Պայքարի նրա ժամանակը սկսվում է այն պահից, երբ երդում է տալիս Բեկի աճյունի առջև. «Երդվում ենք քո սուրբ աճյունի առջև, մեր բախտի աստղ Դավիթ Բեկ, որ մինչև վերջին շունչը կկռվենք Հայոց աշխարհի փրկության համար: Երդվում ենք…Ոչ մի օտար ոտք չի մոտենա քո սուրբ գերեզմանին» (2-րդ, 516):

Մեր պատմության ողջ ընթացքը Մխիթարին հուշում է, որ պայքարի հաջողությունը պայմանավորված է նրա համաժողովրդական բնույթով: Ինչպես Դավիթ Բեկը, նա նույնպես հենվում է ժողովրդի վրա՝ մեկը մյուսի հետևից նոր պահանջներ դնելով մելիքների առջև, որոնք, արտաքուստ հավանություն տալով սպարապետի բարեփոխումներին, ներքուստ թշնամությամբ են լցվում նրա նկատմամբ:

Ինչպես Դավիթ Բեկի, այնպես էլ Մխիթար Սպարապետի կերպարում Ս. Խանզադյանն ընդգծում է, քաղաքական իրավիճակը ճիշտ գնահատելու և ըստ այդմ էլ՝ ռազմավարության ճիշտ ծրագրեր կազմելու նրանց անուրանալի տաղանդը: Վիպասանը Դավիթ Բեկի ու Մխիթարի վարած քաղաքականությունը ներկայացնում է որպես ազգային կեցության ծրագիր, որի հիմքում ընկած են հայ ժողովրդի ուժին հավատալու (հիշենք Մխիթարի՝ բազմիցս կրկնվող խոսքերը. «Ես հավատում եմ հայ ժողովրդի ուժին»), այդ ուժին ապավինելու հաստատակամությունը («Տերությունը հաստատ է մնում ժողովրդով») և դիմադրության ոգին՝ որպես «Ճանապարհն հայոց»-ի միակ ուղենիշ:

Գեղարվեստական բարձր վարպետությամբ են ներկայացված Մխիթար-Սաթենիկ-Գոհար հարաբերությունները, որոնց շրջանակներում բացահայտվում է վիպասանի՝ հոգեբանական խորը ներթափանցումներ կատարելու, կերպարակերտման ու պատկերաստեղծման նուրբ եզրագծեր ու թարմ միջոցներ հայտնաբերելու անուրանալի տաղանդը:

Երկու կրակի միջև հայտնված Մխիթարին ազնվացնում են մարդկայնորեն գեղեցիկ, վեհ տառապանքները: Նա դժբախտ էր համարում իրեն, բայց մխիթարվում էր այն մեծ գործով, որին զինվորագրված էր, բայց հոգեկան ծանր ապրումների պահերին կարողանում էր չկորցնել սթափությունն ու սառնասրտությունը, հանուն մեծ գործի հաջողության մոռանալ անձնական ծանր ապրումներն ու տառապանքները:

Ազատագրական պատերազմի գլխավոր ուժը Ս. Խանզադյանը մարմնավորում է համաժողովրդական միասնության ու անկոտրում կամքի ինքնաբուխ դրսևորումներում: Պատերազմի ժողովրդականությունն պահպանելու նպատակով չի անտեսում նաև հոգևորական-իշխանական դասին, առևտրականներին, արհեստավորներին:

Վեպի թե՛ պատմական և թե՛ գեղարվեստական կերպարներից յուրաքանչյուրը յուրովի է ընկալում ժամանակի ոգին, պատմական պահի թելադրանքը: Ժամանակը երկու ճանապարհ է առաջադրում՝ պայքարելով և

կռվելով ապրելու կամ թշնամու հետ հաշտվելու, նրա լծի տակ գոյատևելու ճանապարհները: Ժամանակը այլընտրանքային սողանցքներ չի թողնում: Այդպես է եղել մեր պատմության ողջ ընթացքում, այդպես է նաև ազատագրական պայքարի նոր շրջանում:

Գ/ ԱՐՑԱԽՅԱՆ ՄԵՐՕՐՅԱ ԳՈՅԱՄԱՐՏԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ

1991 թվականին Ս. Խանզադյանը հրատարակեց «Շուշի» պատմավեպը, որը թե՛ ժամանակագրական, թե՛ ազգային-ազատագրական պայքարի առումով «Մխիթար Սպարապետ»-ի շարունակությունն է:

«Շուշին» նույնպես ճիշտ ժամանակին գրված վեպ է, ինչը զգալիորեն մեծացնում է նրա կարևորությունը, արդիական հնչեղությունը: Վեպը գրվել է 1986-1988 թվականներին և լույս է տեսել 1991 թվականին՝ Սպիտակի ահավոր երկրաշարժից հետո, երբ ոչ միայն բազմահազար զոհեր եղան, այլև կոտրվեց հանրապետության տնտեսական ողնաշարը, արցախյան գոյամարտի հերոսական շրջանում, երբ անհավասար պատերազմ էր մղվում վայրագ թշնամու դեմ, ինչը կրկին խոսում է վեպի կարևոր նշանակության, հեղինակային նպատակամիտումի արդիականության մասին:

«Շուշին» ճիշտ ժամանակին հղացված ու գրված վեպ է նաև մի այլ առումով՝ ազերի վայ-պատմաբանների իրական դեմքը բացահայտելու, նրանց պատմության զեղծարարությունները ի ցույց դնելու տեսանկյունից:

«Շուշի» պատմավեպում նկարագրված իրադարձություններն ունեն պատմական հավաստի հիմքեր, կերպարների ճնշող մեծամասնությունը կոնկրետ դեմքեր են: Պատմական գործողությունների իրական ժամանակը ներկայացնելիս գրողը պահպանում է վիպական գործողությունների ժամանակի, տեղանքի, գործողությունների մասնակից անձանց ստույգությունը:

Վեպում Ս. Խանզադյանն ընտրել է պատումի հետաքրքիր ու յուրօրինակ եղանակ. դեպքերն ու իրադարձությունները ներկայացնում է ոչ թե ինքը՝ հեղինակը, այլ իր հերոսները, ովքեր պատումի մեջ ներառում են ժամանակային որևէ հատված, տարածական կոնկրետ հարթություններ: Դեպքերն ու ծավալվող իրադարձությունները հիմնականում ներկայացնում են միանձնուհու կերպարում հանդես եկող Գոհարը, ով ընթերցողին ծանոթ է «Մխիթար Սպարապետ»-ից, Աբրահամ Երևանցի պատմիչը, ով վայրկյան անգամ, նույնիսկ մարտերի թեժ պահերին, անպակաս է իր մատյանից: Ինչպես «Մխիթար Սպարապետ»-ում, այնպես էլ «Շուշի»-ում հայրենիքի պաշտպաններին միավորում են ազգի միասնության, ազգային արժանապատվության գաղափարները: Դավիթ Բեկի և Մխիթարի գործը շարունակում է Մելիք-Ավան Եգանը՝ «Շուշի» վեպի ամենաընդգծված կերպարներից մեկը:

Ընդգրկումների մասշտաբայնությունը, պատմության տարբեր շրջափուլերի վերաբերյալ փաստական հարուստ տեղեկությունները, իրական ու գեղարվեստական կերպարների մեծ պատկերասրահը, ժամանակաշրջանի կոլորիտը, որը ներկայացված է տեսանելի գույներով ու նրբերանգներով, 18-րդ դարասկզբի արցախյան սովորությունները, բարքերն ու ավանդույթները, հիմնական հերոսներին հոգեբանական, կենցաղային-առօրյա

հարաբերություններում ներկայացնելը և բազում այլ հանգամանքներ «Շուշի» վեպում տեսանելի են դարձնում ժամանակի շարժումը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԵՐՈՍԱԿԱՆՆ ՈՒ ՈՂԲԵՐԳԱԿԱՆԸ

1968-1973թթ. Ս.Խանզադյանը գրեց և 1976-ին հրատարակեց «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպը, որը Հայոց մեծ եղեռնի թեմայով գրված լավագույն ստեղծագործություններից մեկն է նորագույն շրջանի հայ գրականության մեջ:

Ի տարբերություն «Մխիթար Սպարապետ»-ի՝ Ս.Խանզադյանի այս վեպը չունի սյուժետային ճյուղավորումներ, սակայն աչքի է ընկնում ոճավորման, կերպարակերտման ու պատկերաստեղծման յուրահատկություններով:

Պատմական Երզնկայի հայկական ջարդերի, գավառի Կաթակն գյուղի հերոսական ինքնապաշտպանության միջոցով Ս. Խանզադյանը գեղարվեստական բարձր վարպետությամբ ներկայացնում է ողջ Արևմտահայաստանում տիրող իրավիճակը, ժողովրդի դաժան ճակատագիրը, ջարդերի ահասարսուռ տեսարանները, դանթեական դժոխքի պարունակներում բզկտվող արևմտահայության կենսապատումի ողբերգական ու հերոսական էջերը:

Ս.Խանզադյանի նպատակը, սակայն, ջարդերի նկարագրությունը չէ, այլ փիլիսոփայական այն ելակետի հիմնավորումը, որ հայապահպանության երաշխիքը «Ճանապարհն հայոց»-ի բոլոր հանգրվաններում եղել ու մնում է միասնականությունը, սեփական ուժերին ապավինելու կարողությունը, և, որ ամենակարևորն է, երբեք և ոչ մի պարագայում թուրքերի կեղծ հավաստիացումներին ու երդումներին չհավատալու դավանանքը:

Վեպում Ս.Խանզադյանը կերտում է թե՛ իրական և թե՛ գեղարվեստական տասնյակ կերպարներ:

Գեղարվեստական առումով կատարյալ է Ներսեհ Չաուշի կերպարը, որը, իրական լինելով, ներկայացված է գեղարվեստական բարձր վարպետությամբ ու խորհրդանշում է այն քաջազուններին, ովքեր կարողացան համախմբել հայության որոշ հատվածներին, կազմակերպված դիմադրություն ցույց տալ ու արժանի հակահարվածներով դիմակայել թուրքական կանոնավոր զորագնդերին ու արյունարբու խուժանին:

Ժամանակն իր կնիքն է դրել այս հայ քաջորդու բնավորության ձևավորման, անհատականության կայացման վրա:

Կաթակնցիների և նրանց միացած այլ գավառների ու գյուղերի բնակիչների հետ ամրանալով Ակնովիտի լեռնածերպերին՝ Ներսեհ Չաուշը ցուցաբերում է մարտավարական բարձր ունակություններ, ինքնապաշտպանությունը խելացի կազմակերպելու հմտություններ: Երկարատև մարտերից, բազմաթիվ կորուստներից հետո նրան հաջողվում է Արաքսի մյուս ափը հասցնել հայության մի ստվար մասին:

Ներսեհ Չաուշի կերպարով Ս.Խանզադյանն ընդգծում է առանձին անհատների կարևոր դերը ժողովրդին համախմբելու, դիմադրության ոգին բարձրացնելու հայոց հոգեկերտվածքի մեջ «մատաղի գառան» հոգեբանությունը հաղթահարելու գործում:

Վեպը սկզբից մինչև վերջ համակված է այն գաղափարով, որ ժողովուրդն է այն հիմնական ուժը, որի միջոցով կազմակերպվեց հայրենիքի պաշտպանության, թշնամուն արժանի դիմադրություն ցույց տալու ազատագրական պայքարը: Հեղինակն անընդհատ ցույց է տալիս հայրենի հողն արյան գնով պաշտպանելու ժողովրդական վճռականությունը: ժողովուրդն իր հաստատակամությունն ու բարոյական բարձր հատկանիշները ցուցաբերում է իրադարձությունների լարման օրհասական պահերին, երբ անհրաժեշտ էր զորակոչից թաքցնել Կաթակնի երիտասարդներին, զենք ձեռք բերել, պարեն ու զինամթերք պահեստավորել: Բազմաթիվ մարտերում նա ցուցաբերում է իր ոգու վեհությունը, անխորտակելի հավատը, դյուցազնական ուժով հայրենի եզերքը պաշտպանելու կամքը:

Հայոց մեծ եղեռնից փրկված բեկորները ցրվեցին աշխարհով մեկ, շատերն անցան Արաքսի մյուս ափը, տնավորվեցին Հայաստանի տարբեր վայրերում: Սակայն նրանց դեռևս վիճակված չէր ապրել խաղաղ, ստեղծագործ կյանքով: Այս անգամ արդեն՝ եղեռնից մի քանի տարի հետո, նրանք նորից ստիպված եղան զենք վերցնել և Անդրանիկի ու Նժդեհի գլխավորությամբ մասնակցել թուրք-ազերիական զորքերի ու ավազակախմբերի դեմ մղվող մարտերին:

«Անդրանիկ» և «Գարեգին Նժդեհ» վեպերը գրվել են փաստական հարուստ նյութի վրա: Հեղինակն ուսումնասիրել է Անդրանիկ զորավարի և քաղաքական ու ռազմական հայտնի գործիչ Գարեգին Նժդեհի վերաբերյալ հրապարակում եղած բոլոր նյութերը, գրի առել զորավարի նախկին զինվորների, որոնց թվում քիչ չեն եղել սյունեցիները, հիշողությունները, նրա մասին շրջանառվող զրույցները, առասպելները: Իսկ Գարեգին Նժդեհի մասին պատմություններ է լսել ու գրի առել նրա հետ անմիջական շփումներ ունեցող զինակիցներից, որոնցից ոմանք դեռևս ողջ էին ու կարող էին բնութագրել Նժդեհին թե՛ որպես պետական-ռազմական գործիչ, թե՛ որպես անհատականություն:

Այս վեպերն իրար հետ կապված են առաջին հերթին ժամանակայինընույն ընթացքով և այդ հատվածում իրար հաջորդող իրադարձություններով: Ընդամենը մեկուկես տասնամյակի իրադարձություններ են ներկայացված «Անդրանիկ»-ում և «Գարեգին Նժդեհ»-ում, բավականին կարճատև մի ժամանակահատված, որը, սակայն, լեփ-լեցուն է ողբերգական ու հերոսականէջերով:

«Անդրանիկ» վեպի վրա Ս. Խանզադյանն աշխատել է մոտ տասը տարի՝ 1973-1983: Վեպը լույս է տեսել 1989 թվականին՝ զորավորի ծննդյան 125-ամյակի առթիվ: Վեպի հղացման մասին Ս. Խանզադյանը բազմիցս նշել է, որ Անդրանիկի հիշատակը վեպով հավերժացնելը իր գերագույն նպատակներից մեկն է եղել, բայց հայտնի պատճառներով չի իրականացվել ավելի վաղ:

Անդրանիկ զորավարի կերպարը համանուն վեպում ներկայացվում է որպես հայ ժողովրդի ազատատենչ ոգու, ազատ ու անկախ ապրելու, ազգային արժանապատվությունը բարձր պահելու խորհրդանիշ:

Վիպական գործողությունները տեղի են ունենում 1910-ական թվականներին, երբ Այսրկովկասը նորից կռվախնձոր էր դարձել եվրոպական գերհզոր տերությունների միջև:

Իրական կոնկրետ հանգամանքներում է Ս. Խանզադյանը ներկայացնում Անդրանիկի կերպարը, որը բնութագրվում է որպես մեծ զորավար, կոնկրետ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվող, ձեռքը ժամանակի զարկերակին պահող քաղաքական գործիչ, ով առաջնորդվում է սեփական ուժերին ապավինելու՝ դարերով ստուգված կարգախոսով:

Անդրանիկը Հայաստան է գալիս ազգի պահանջով, նրա ցաքուցրիվ ուժերը համախմբելու, Սասնա լեռներում իր հետ կռված ֆիդայիներինհավաքագրելու,հայկական կամավորական գնդեր կազմելու, ռուսական ուժերի հետ թուրքերի դեմ կռվելու միտումով: Ազգը ցնծությամբ է ընդունում զորավարին:

Անդրանիկի կերպարում Ս. Խանզադյանն արծարծում է ռազմա-քաղաքական, բարոյահոգեբանական, խոհափիլիսոփայական խնդիրներ, ինչով էլ պայմանավորված է վեպի կերպարների բազմաքանակությունը, սյուժեի աշխարհագրական լայն ընդգրկումները:

Զորավարի կերպարը Ս. Խանզադյանը փորձում է կերտել ժամանա-կաշրջանի պատմաքաղաքական համապատկերում՝ ընդգծելով նրա քաղաքական հեռատեսությունը: Ժամանակի սրված զգացողությունը Անդրանիկի բնավորության ամենաբնորոշ կողմն է, և այդ զգացողությամբ է զորավարը արժևորում տարածաշրջանում և Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները: Պատմության փորձը նրան հուշում է, որ երբեք չպետք է հավատալ թուրքերի կեղծ խոստումներին ու խորամանկ քայլերին, որոնք հայերի զգոնությունը բթացնելու, որոգայթներ լարելու նպատակ են հետապնդում:

Վեպում Անդրանիկ զորավարը ներկայացված է որպես հմուտ դիվանագետ, ով երբեք չի հավատում մեծ տերությունների կեղծ հորդորներին ու խոստումներին: Չի հավատում՝ գիտակցելով, որ Հայաստանը նրանց համար լոկ հասարակ խաղաքար է ազդեցության ոլորտների համար մղվող մոլախաղերում, և հանուն վերջնական նպատակի՝ այն հեշտությամբ կարելի է նաև զոհաբերել: Զորավարի հավատը իր ժողովուրդն էր, նրա միասնությունը, անկոտրում կամքն ու պայքարի ոգին:

1993 թվականին Ս. Խանզադյանը հրատարակեց «Գարեգին Նժդեհ» վեպը, որն առաջին փորձն էր վիպականացնելու Գարեգին Տեր-Հարությունյանի՝ տաղանդավոր քաղաքական գործչի ու զորավարի կերպարը: Ճիշտ է, «Գարեգին Նժդեհը» չունի Ս. Խանզադյանի նախորդ վեպերի խորությունն ու ընդգրկումների լայնությունը, գեղարվեստական բարձր արժանիքները, բայց ճիշտ ժամանակին ու ճիշտ նպատակամիտումով գրված ստեղծագործություն է՝ ևս մի անգամ ի ցույց դնելու հարևան հանրապետության նկրտումներն ու մտադրությունները, որոնք տասնամյակների պատմություն ունեն՝ կապված Ղարաբաղի ու Զանգեզուրի հետ:

Տասնամյակներ շարունակ Գարեգին Նժդեհի՝ ականավոր քաղաքական գործչի, զորավարի, գիտնականի կյանքն ու գործունեությունը գտնվել են յոթ փակի տակ, ու միայն խորհրդային կարգերի փլուզումից հետո է հնարավոր դարձել անդրադառնալ նրան, բացահայտել այն մեծ դերը, որ ունեցավ նա Ղարաբաղի ու Զանգեզուրի ինքնապաշտպանական մարտերում: Եվ եթե այսօր Զանգեզուրը նույնպես բռնակցված չէ Ադրբեջանին, ապա դրանում մեծ է Նժդեհի առաքելությունը:

Վեպում Ս. Խանզադյանն անդրադառնում է 1918-1921թթ. Զանգեզուրում մղված ազգային-ազատագրական-ինքնապաշտպանական կռիվներին, պատմական Գողթն գավառում տեղի ունեցած իրադարձություններին: Ի տարբերություն Ս. Խանզադյանի մյուս պատմավեպերի՝ «Գարեգին Նժդեհ»-ում միայն իրական կերպարներ են, որոնք ներկայացված են տարածաժամանակային կոնկրետ միջավայրում, իրական հանգամանքներում: Ս. Խանզադյանը, սակայն, պարզապես չի արձանագրում դեպքերն ու իրադարձությունները, որոնք զարգանում են շեշտակի արագությամբ, հաճախ փոփոխվում ժամ առ ժամ՝ պայմանավորված տվյալ խառնակ ժամանակահատվածին բնորոշ տարաբնույթ զարգացումներով:

Զորավարին հատուկ հեռատեսությամբ Նժդեհն զգում էր, որ Զանգեզուրի փրկության գործը նախևառաջ պայմանավորված է ժողովրդի միասնությամբ և կազմակերպվածությամբ, որ ինքնապաշտպանությունից պետք է անցնել հարձակողական գործողությունների, հասնել ոչ միայն հաջողությունների, այլև խոշոր հաղթանակների: Նրա համար հայրենիքը գերագույն արժեք էր, հայրենասիրությունը՝ գենետիկորեն փոխանցված մեծագույն զգացում. «Իմ հավատքի ու պաշտամունքի տաճարում,- գրել է Նժդեհը,- միշտ էլ առաջին տեղերը հատկացված են եղել Աստծուն և հայրենիքիս: Հայաստանն է եղել երկրավոր սրբազնագույնն ինձ համար: Շնչել, ապրել եմ նրանով և միշտ պատրաստ տառապելու, զոհաբերելու և մեռնելու նրա համար: Դա է իմ սրբազան ցավը, կարոտը, ուրախությունը, իմ գոյության իմաստը, իմ անմահությունը, իմ գերագույն իրավունքն ու պարտականությունը»[4]:

Քուն ու դադար չունի աստանդական այդ հերոսը, ում կերպարը Ս.Խանզադյանը ներկայացնում է մի առանձին սիրով ու գորովանքով՝ որպես օրինակ գալիք սերունդներին:

Բացի Գարեգին Նժդեհից՝ Ս.Խանզադյանը փորձում է վիպականացնել նաև Զանգեզուրի ազատամարտի մի շարք առաջամարտիկների կերպարները, որոնք հանիրավի մոռացության են մատնվել խորհրդային տարիներին կամ դատապարտվել: Փաստական հավաստի տեղեկությունների հիման վրա են կերտված խմբապետներ Կուռոյի, Սաքոյի, Յապոնի, Խաչատուր Մալինցյանի, Թևան Ստեփանյանի և ուրիշների կերպարները, որոնց ջանքերով տապալվեցին Զանգեզուրը ևս Նախիջևանի ու Արցախի պես Ադրբեջան հորջորջված արհեստածին պետությանը բռնակցելու բոլշևիկյան ու թուրք-ազերիական ծրագրերը:

---

[4] Նժդեհ՝ Կեանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ, Պեյրութ, 1968, էջ 431:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԸ

Քննադատական միտքը 1960-70-ականների արձակում առանձնացնում է մի հետաքրքիր օրինաչափություն՝ գրականության ընդգծված հակումը դեպի բանահյուսություն ու դիցաբանություն, ինչը թեպետ նորություն չէ մեր գրականության համար, սակայն «կոնկրետ իմաստ ունի և թելադրվում է գրական պրոցեսի օբյեկտիվ օրինաչափությամբ»[5], աշխարհաքաղաքական զարգացումների նոր բովանդակությամբ:

Ս.Սարինյանը բանահյուսության ու դիցաբանության այդ «նոր հոսքը» դիտարկում է որպես գեղարվեստական մտածողության թարմացմանն ու գրականությունը կենսատու նոր լիցքերով հարստացնելուն ուղղված գործընթաց, որը հնարավորություն է տալիս «գեղարվեստական նոր փոխաձևման միանգամայն խորիմաստ ու հետաքրքրական իրողության ենթաշերտերում հայտնաբերել ոչ միայն ազգային լինելությունը հաստատող կայուն նստվածքներ, այլև էթիկական ու փիլիսոփայական հարուստ արժեքներ, որոնք գրականությունը մղում են դեպի համամարդկային ոլորտներ, ընդլայնում նրա ներքին տարողությունը»[6]: Կարևորվում է «պատմական իրողություններից ու հավասարակշռված տրամաբանությունից դուրս ներկա աշխարհն ու իրադարձությունները հնագույն առասպելների մեջ խտացված, բյուրեղացված հիշողությունների մեջ փնտրելու ձգտումը, ներկայից դեպի հնագույն ժամանակները գնալու հետադարձ ճանապարհը, ակունքներին հասնելու և ազգի գոյաբանական հիմքերը գտնելու մղումը, որը միանգամայն տեղավորվում է ժամանակակից մշակույթի համատեքստում»[7]:

Գրողների ուշադրությունն ավելի ու ավելի է սևեռվում մեր պատմության այն շրջանին, երբ «կործանվում էին հին աստվածները, գալիս էին նորերը, բարբարոսության ու կեցության հեթանոս ազատության դեմ մահու կռիվ է մղում մարդկային քաղաքակրթությունը, պատմական նոր դարաշրջանը»[8]:

Հեթանոսական շրջանի հայոց պատմությունը 1960-ականների վերջերին ու 1970-ականների սկզբներին պատմավեպերով ներկայացրեցին Հայկ Խաչատրյանը՝«Էրեբունի» (1968), «Տիգրան Մեծ»(1972), «Արտավազդ» (1975), Խ.Գյուլնազարյանը «Նռանի» (1971),ովքեր ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական զարգացումների համապատկերում ներկայացրին հեթանոսությունից քրիստոնեության, բազմաստվածությունից միաստվածության անցման շրջանի սուր բախումները, միահյուսեցին պատմության առասպելական ու իրական շրջանները, ներկայացրին հեթանոսական բարքերը, սովորությունները, կենցաղի մանրամասները:

---

[5] Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, հ. 2, Երևան, 1989, էջ 442:
[6] Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, էջ 442:
[7] Քալանթարյան Ժ.,Ազգային ինքնության փիլիսոփայությունը էպոսում՝ ըստ Լևոն Խեչոյանի, «Գրական թերթ», 2014, № 13:
[8] Մարգարյան Ս., Պատմության ժամանակը, Երևան, 2000, էջ 125:

Հայոց պատմության հեթանոսական շրջանին է անդրադառնում նաև Ս.Խանզադյանն իր « Թագուհին հայոց» վեպում, որը քննադատության կողմից որակվեց որպես ստեղծագործական նվաճում ոչ միայն հեղինակի, այլև ժամանակակից հայ գրականության համար (Ս.Աղաբաբյան, Հր.Թամրազյան, Ս.Արզումանյան, Ս.Սարինյան և այլք):

Առասպելականի ու իրականի զուգորդումներով Ս.Խանզադյանը բացահայտում է իր գաղափարական ելակետը՝ «հասնել պատմության գիտական լուսաբանման»[9], ներկայացնել թագաժառանգ Կարաննիի ու թագուհի Մարի-Լույսի՝ խեթական թագավորության դեմ մղած պայքարը՝ «հայկական ցեղերը միավորելու մեկ միասնական կազմակերպված պետականության մեջ»[10], վերացնել բազմաստվածությունն ու մարդազոհության կարգը, «քանդել աստվածների տաճարներն ու դրանց քարով բերդ շինել»:

Միաստվածության՝ այսինքն՝ հոգևոր ինքնուրույնության ու ամբողջականության գաղափարը վեպում է քաղաքական անկախության ձգտումներին: Թագաժառանգ Կարաննիի ու հայոց թագուհի Մարի-Լույսի համար բոլորովին էլ հեշտ չէր ջարդել դարերով հայկական ցեղախմբերի հոգեբանության մեջ արմատավորված կարծրատիպերը, սերմանել բարոյականության նոր նորմեր, ցեղապետերին ստիպել հրաժարվել իրենց իրավունքներից ու արտոնություններից, ենթարկվել միայն թագավորին: Այդ իսկ պատճառով Կարաննին իր հոր սահմանած օրենքներից շատերը փոխում ու հարմարեցնում է ժամանակի պահանջներին: Նա հայտնաբերում է պետության ու պետականության իդեալը: Նրա օրոք պատմության սուբյեկտ է դառնում պետականության խորհրդանիշ թագավորը:

Ս.Խանզադյանը թագաժառանգ Կարաննիին ներկայացնում է որպես պետական մտածողությամբ օժտված, բազմաթիվ մարտերում կոփված, պետականաշինության գործերին քաջատեղյակ անձնավորության, ով, բաժան-բաժան ցեղախմբերը միավորելուց բացի, մտածում է երկրի պաշտ-պանունակության բարձրացման, ուժեղ ու մարտունակ բանակ ստեղծելու, հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների իրավունքներն ու պարտականությունները որոշարկելու խնդիրների շուրջ: Նա ցեղապետերի իշխանությունն առանձին գավառներում թուլացնելու նպատակով նրանց զրկում է զորքից, դրանք միավորում արքայական դրոշի ներքո, ռոճիկն ու զենքի գինը տալիս թագավորական գանձարանից:

Կարաննին միասնական պետականության հետ է կապում ազատության նվաճման ու ազգային արժանապատվության պահպանման գաղափարը:

Ողբերգական կերպար է, անշուշտ, Կարաննին, ում էության երկու բևեռները հակադրվում են իրար, դառնում հոգեկան խորը ալեկոծումների պատճառ, փոթորկում նրա ներաշխարհը: Հեթանոսական խրախճանքների մեջ ու Նուարի գրկում նա անճանաչելիորեն փոխվում է, երբեմն դառնում անկառավարելի, խենթանում է կանացի մարմնի աստվածային հմայքներից, մոռանում իր դիրքն ու ով լինելը, և սա, մեր կարծիքով, հիմք չի կարող լինել

[9] Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, 3, Երևան, 1968 , էջ 169:
[10] «Գրքերի աշխարհ», 1978, №12:

նրան ոչ դրականորեն բնութագրելու համար: Վերջիվերջո, Կարաննին, թեկուզ և թագաժառանգ, այնուամենայնիվ, մարդ է, բիոլոգիական էակ՝ իր բնական ցանկություններով ու հակումներով, ինչն ավելի դինամիկ ու ամբողջական է դարձնում նրա կերպարը:

Բացի թագաժառանգ Կարաննիից՝ ողբերգական են նաև վիպական գործողությունների մեջ ներքաշված կերպարներից շատերը, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է ներկայացնում իր ապրած ժամանակի շունչը, ոգին, մտածողության կերպը: Վեպում ամենաողբերգականը Մարի-Լույսի կերպարն է, որը ներկայացված է ժամանակի պատկերն ամբողջացնող գծերով: Հենց այս կերպարով է Ս.Խանզադյանը գեղարվեստական բարձր վարպետությամբ զուգորդում առասպելականն ու իրականը:

Վիպական գործողությունների հենց սկզբից Մարի-Լույսը հանդես է գալիս երևույթների գնահատման սթափ հայացքով, սառը դատողությամբ, քաղաքագետի, ռազմական գործչի ակնհայտ ունակություններով: Ամուսնու՝թագաժառանգ Կարաննիի հետ նա պայքարում է միասնական պետության ստեղծման ու ամրապնդման համար, ու նրա առաջին մտահոգությունը բազմաստվածության վերացումն էր, որն իր մարդազոհության կարգով իսկական չարիք էր ժողովրդի համար: Նա խիստ հետևողական էր և չէր երկնչում ոչ ոքից:

Հեղինակը Մարի-Լույսին օժտում է առասպելական դյուցազնու-հիներին յուրահատուկ բնավորության գծերով, աստվածային գեղեցկությամբ. նրա աչքերից կայծակներ են ցայտում, նրա հոնքերը բարձր են ինչպես հայոց լեռները, «վարդագույն մետաքսի փայլը Մարի- Լույսին մայր մտնող արևի հմայք են տալիս», երբ նա շարժում է թարթիչները, բիբերի սև խառնարանից սև կրակներ են ցայտում»[11]:

Գերության մեջ անգամ Մարի-Լույսը չի կորցնում իր արժանա-պատվության բարձր զգացումը. նրա համար առաջնայինը ոգին էր, որ միշտ բարձր էր պահում:

Նրա մեջ գրողն առանձնացնում է երկու հակամետ որակներ՝ «դժոխային դաժանությունն ու լույսի պես անարատ սերը»: Թագուհին իր ողջ էությամբ դեմ է մարդազոհությանը, բայց և մի չնչին առիթով գլխատել է տալիս իր պատգարակակիր ստրուկներին, իսպառ կորցնելու սպառնալիքով է դիմում բոլոր նրանց, ովքեր զանց կառնեին իր հրամանները, կարգադրում է իր անձնապահ զորագնդի պետ Արբոկ Պերճին «սուր բանեցնել նրանց շլինքներին», ովքեր, հատկապես խեթ քրմերը, կհամարձակվեն արարողություն անել Շանթ աստծո տաճարում:

Մերթընդմերթ Մարի-Լույսի հիշողություններում վերակենդանանում են Սիսական աշխարհի անմոռանալի պատկերները, և նա իրեն համեմատում է բանտված, «ազատ գոյությունը խախտած» վայրի այծյամի հետ, որն իր «երամակին է կարոտում, նախնի իր որձին է կարոտում՝ ձգտելով դեպի իր վայրի սովորույթը»[12]:

---

[11] Նույն տեղում, էջ 9:
[12] Նույն տեղում, էջ 49:

Մենք մերթ տեսնում ենք կրքերի խելագար բռնկումների պահերին «վայրի ցուլեր» տեսնչացող Մարի-Լույսին, մերթ աստվածավախ, աստվածապաշտ կնոջը, ում համար ընտանիքի ու ամուսնու պատիվը վեր է ամեն ինչից: Այսպես է ծնվում թագուհու հոգեկան ծանր դրաման, որը Ս.Սարինյանը բնութագրում է որպես «բիոլոգիական էություն» և մենամուսնության գաղափարի բախման հետևանք»[13]:

Մարի-Լույսն իր էությամբ բնության ազատ զավակն է, և նրա համար խորթ են բոլոր արգելքներն ու տաբուները՝ լինեն դրանք աստվածային վերին կամքով սահմանված, թե կարգով ու օրենքով պարտադրված:

Վեպն ավարտվում է Մարի-Լույսի կործանմամբ, և այդ ճանապարհը հենց ինքը՝ թագուհին է ընտրում իր համար՝ հերքելու թագավորական տոհմի անարատությունը պղծելու Արվանդ Բիխունու տարածած ու սնոտիապաշտ ամբոխի վայրենի կրքերը բորբոքած հերյուրանքները: Մարի-Լույսն իրեն ամբողջովին լքված, մոռացված, դատապարտվածէ զգում, բայց հաղթողի հոգեբանությամբ է Արվանդ Բիխունու առաջնորդությամբ մոտենում զոհասեղանին՝ առանց մեղքի զգացումի, առանց դույզն ինչ իրեն դատապարտելու. իր հաղթանակն արդեն առերևույթ է՝ կանգուն է հայոց գահը, միասնական պետության դրոշի ներքո համախմբված, ու միաստվածությունն, իբրև դավանանք ընդունած հայկական ցեղախմբերին այլևս վտանգ չի սպառնում, մեծանում ու առնականանում է իր գահաժառանգ որդին:

Նա իրականացված է համարում մարդ արարածին տառապանքներից փրկելու իր առաքելությունը ու աստվածանում. «Մարի-Լույսն աստվածացավ, մարդի՛կ: Երկրպագեցե՛ք ձեր նոր աստվածուհուն՝ Մարի-Լույսին»:

[13] «Գրական թերթ», 1979, № 8:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ժամանակը Սերո Խանզադյանի պատմավեպերում» թեմայի ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Իր պատմավեպերում Ս.Խանզադյանը, շարունակելով հայ դասական պատմավիպասանության ավանդույթները, փորձում է հայտնաբերել ժամանակի «ներքին ֆունկցիան» ու նրա շարժումը մեկնաբանել ճշմարիտ պատմականության դիրքերից: Արդիականության տեսանկյունից իմաստավորելով հայ ժողովրդի հերոսական գոյապայքարը պատմական առաջընթացի տարբեր շրջափուլերում՝ Ս.Խանզադյանն ավելի է խորացնում «ճանապարհն հայոց» հասկացությունը, որը դարեր շարունակ եղել և մնում է մեր գաղափարաբանության անկյունաքարը:

2. Ս.Խանզադյանի պատմավեպերում ժամանակը հանդես է գալիս ամենատարբեր չափումներով, իր «բաց» և «ներփակ» դրսևորումներով: Դրանց մեջ մի դեպքում համընկնում են պատմական ու գեղարվեստական ժամանակները, մի այլ պարագայում՝ ներառում են ժամանակային տարբեր հոսքեր:

3. Ս.Խանզադյանի պատմավեպերում ժամանակն ընդգրկում է անհատի ու ժողովրդի կյանքի ինչպես ծավալուն հատվածներ, այնպես էլ փոքր, բայց նույնպես կարևոր իրադարձություններ: Նրա պատմավեպերի ժամանակային սահմաններն իրենց շրջանակներում ներառում են մեր պատմության որոշակի շրջանների իրադարձությունների բարձրակետերն ու այդ համապատկերում՝ հերոսների կյանքի ժամանակները: Ժամանակի սուր զգացողությունը Ս.Խանզադյանին հնարավորություն է տալիս գոյապայքարի ընդհանուր տրամաբանության ու շարունակականության համապատկերում ներկայացնել տարբեր ժամանակաշրջանների աշխարհաքաղաքական, սոցիալական զարգացումները, բարոյահոգեբանական մթնոլորտը, կոլորիտը, բարքերն ու սովորույթները:

4. Անդրադառնալով պատմական որևէ կոնկրետ ժամանակաշրջանի՝ Ս.Խանզադյանն անցյալում կատարված մեծ ու փոքր իրադարձությունները փորձում է ներդաշնակել ներկայում ընթացող դեպքերին, գեղարվեստական տարածք ներմուծել պատմամշակութային ու բարոյահոգեբանական այնպիսի արժեքներ, որոնք, անցնելով դարերի փորձությունների միջով, արդիական են նաև այսօր:

5. Ս.Խանզադյանը, վիպական ժամանակի տևականության մեջ ընդգրկելով ժողովրդի կենսասիրական ձգտումները՝ «փորձում է հասնել պատմաշրջանի «բազմեզր» ըմբռնման և իրադրությունների միահյուսման ճանապարհով կոնկրետ ժամանակահատվածում ներկայացնել իր պատմական ու գեղարվեստական կերպարներին:

6. Ս.Խանզադյանը հաճախ շեղվում է պատմական կոնկրետ փաստերից՝ դրանք խախտելով ի շահ գեղարվեստական ճշմարտության: Ժամանակը դարձնելով գեղարվեստական ընկալման առարկա՝ գրողը պատմական կերպարների կողքին ավելացնում է նաև ստեղծագործական կերպարներ, որոնցից շատերը, թերևս, ավելի ավարտուն են ու լիարժեք:

7. Ս.Խանզադյանի թե՛ պատմական և թե՛ գեղարվեստական կերպարները ժամանակի ծնունդ են: Ժամանակաշրջանն է նրանց

հերոսացնում, մղում անձնազոհության, առնում տարերքի մեջ: Այդ կերպարները Ս.Խանզադյանը ներկայացնում է երկու զուգահեռներում՝ պատմություն-հերոս, ժամանակ-հերոս գծերի համադրմամբ՝ յուրահատուկ կապ ստեղծելով պատմական անցյալի ու ներկայի միջև:

8. Իր պատմավեպերում Ս.Խանզադյանը, ներկայացնելով հայոց պատմության հերոսական ու ողբերգական իրադարձությունները, հույժ կարևորում է ոչ միայն մեր ժողովրդի փառավոր հաղթանակները, այլև այն, որ երկրի հզորությունը պայմանավորված է նաև հոգևոր մաքառումների խորությամբ ու լայնությամբ:

9. Ս.Խանզադյանի պատմավեպերում արծարծված պատմության դասերը հույսը սեփական ուժերին ապավինելու, ազգային ինքնությունը պահպանելու, տարաբնույթ մարտահրավերներին դիմակայելու իմաստուն պատգամներ են և հույժ արդիական են մեր օրերում: Վստահաբար կարելի է փաստել, որ Ս.Խանզադյանի պատմավեպերը իմացաբանական խոր նստվածքներով պատմական որոշակի ժամանակաշրջանների համապատկերը ներկայացնելուց բացի հանգրվանային իրողություններ են 1960-1990-ական թվականների պատմավիպասանության առատ հունձքի մեջ:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են՝

1. Պատմության դասերի խանզադյանական արծարծումները, «Հայագիտական հանդես», Երևան, 2011, № 2-3 (16-17), էջ 43-46:
2. Ժամանակը Ս.Խանզադյանի պատմավեպերում («Մխիթար Սպարապետ», «Շուշի»), Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, «Հայագիտական հանդես», Երևան, 2013, № 2-3 (23-24), էջ 151-155:
3. Ժամանակը և տարածությունը Ս.Խանզադյանի պատմավեպերում, Հեղինակային հրատ., Երևան, 2015, 126 էջ:

Давтян Айкануш Юрьевна

“Время в исторических романах Серо Ханзадяна’’

Диссертация на соискание ученной степени кандидата филологических наук по специальности 10.01.02- «Армянская литература новейшего периода»
Защита состоится 27-ого ноября 2015г., в 12^{30} часов, в специализированном совете 003 Института им. М.Абегяна НАН РА по адресу: Ереван , ул. Григора Лусаворича, 15

РЕЗЮМЕ

Предметом исследования в диссертации «Время в исторических романах Серо Ханзадяна» являются исторические романы писателя, составляющие значительную часть его богатого литературного наследия («Мхитар Спарапет» , «Заговорите, гору Армении», «Царица армянская», « Шуши», «Андраник», «Гарегин Нжде»), а также написанные о них работы и опубликованные в периодических изданиях статьи, целью – характеристика категории времени в исторической художественной прозе выдающегося писателя и выявление обостренного чуства времени, присущего Ханзадяну, первоочередной задачей – осмысление ханзадяновских трактовок философии истории, уроков прошлого с современной точки зрения. Поскольку время и пространство неразрывно связаны друг с другом, мы пытаемся представить их единство, которое в исторических романах С.Ханзадяна выполняет структурные функции и включает в себя не только содержательные , но и структурообразующие элементы художественного произведения, а также оказывает влияние на формирование логики композиции и построения сюжетной цепочки.

Исследование состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы.

В первой главе мы обратились к тем романам С.Ханзадяна, действие которых происходит в первой и последней четвертях XVIII века и охватывает достаточно широкий пространственный диапазон («Мхитар Спарапет», «Шуши»).

Несмотря на то, что действие событий первой и последней четвертей XVIII века, описанных в произведениях «Мхитар Спарапет» и «Шуши», происходит в горах Сюника и Арцахе, эти события разворачиваются и получают дальнейшее развитие в самых разных областях Армении и даже выходят за ее пределы, достигая Турции и Ирана, Ближнего Востока, Апшеронского полуострова, Северного Кавказа, Санкт-Петербурга и других мест.

Какв вышеупомянутых, так и в остальных романах С.Ханзадяна, время выступает в самых различных измерениях, в своих «открытых» и «замкнутых в себе» проявлениях: в одном случае совпадают реальное и историческое время, в другом – мы видим многообразные потоки времени. Ход развития событий в этих романах обусловлен в значительной мере факторами времени, которые определяют направления движения, вовлекаю1т в освободительную борьбу

наделенных чувством времени людей – лидеров в борьбе за существование и бойцов за свободу, обьединяют внутренний потенциал народа, выявляют его скрытие возможности, волю и несгибаемый дух.

В первой главе подчеркивается определяющая роль филисофских понятий времени и пространства в вопросах формирования духовной сущности, становления личности. Нами акцентируется тот факт, что образы героев указанных романов являются пораждением своей эпохи, и действуют они согласно требованиям времени. Эпоха героизирует их, толкает на самопожертвование, вовлекает в свою стихию.

Во второй главе мы обратились к романам, изображающим события, связанные с Геноцидом армянского народа и последующим за ним периодом («Заговорите, горы Армении», «Андраник»), действия которых хотя и разворачиваются в относительно недолгий промежуток времени (два десятилетия прошлого века), однако уходят своими корнями в глубь истории, свидетельствуя о том, что наши варвары-соседи стали такими не за одно-два десятилетия. Они испокон веков были такими: кровожадными, падкими на чужое добро, вераломными, бесчестными, низкими.

В упомянутых романах действия развинаются в обшей панораме геополитических процессов данного периода, в разных географических плоскостях, и представлены они в аспекте основной логики нашей борьбы за существование у ее непрерывности.

С.Ханзадян по праву принадлежит к числу тех, кто состоит у истоков арцахского освободительного движения, а уроки истории, приллюстрированные в произведениях писателя и истолкованные с помощью присущих именно Ханзадяну подходов, можно назвать мудрыми заповедями и в наши дни: уповать на собственные силы, сохранять всенародный характер героизма, сплоченно противостоять угрозам.

В третьей главе мы рассмотрели один из шедевров армянской исторической прозы- роман «Царица армянская», в котором писатель мастерски сочетает традиции классической армянской и современной европейской романтики, расширяет пространственно-временные границы, обьединяет легенды и реальность. Сюжет романа охватывает события, происходившие на прородине нашего народа-в стране Хайаса, во втором тысячилетии до н.э. Целью автора является выявление наших корней и опровержение мнения о существовании Урартского государства. «Наш язык, - пишет Ханзадян, - дает точные сведения о соседних с нами древних странах (Вавилон, Египет, Ассирия), но в нем нет намека на наименование государства Урарту. Спрашивается, почему. Потому что не было никакого Урарту. Как могло случиться, чтобы государство, просуществовавшее 3-4 столетия, не оставило никакого следа в языковом мышления народа?.

С.Ханзадян виртуозно изображает ход времени, художественно аргументирует версию, согласно которой Урарту представляло собой лишь один из периодов истории Армении языческой эпохи. Страна Хайса благодаря своей

мощи и богатству была центром цивилизаций востока, именно там находились перекрестки культурных дорог, именно там создавались языческие шедевры древнего мира.

Обостренное чувство времени позволяет автору оживить колорит языческой эпохи, ее цвета о оттенки, нравы и обычаи, обнаружить те важнейшие сдвиги , которые оказали решающее воздействие на дальнейшее развитие истории. Роман «Царица армянская» можно назвать очень современно написанным произведением в первую очередь потому, что он рассказывает исторические связи между Хайасой и Арменией, с помощью обьективных доводов опровергает бредни, распростроняемые о нашем происхождении соседними кочевыми скотоводческими племенами. Уже одно то обстоятельство. что в различных географических регионах, населенных армянами, до наших дней сохранились многие из описанных в «Царице армянской» языческих обрядов, обычаев, характерных сторон уклада жизни, свидетельствует о том, что нашей прородиной была именно Хайаса, что именно там сформировались многочисленные признаки, присущие нашему народу, нашему национальному характеру, нашему образу жизни.

В заключении представлены итоги исследования.

Davtyan Haikanush Yuri

"Time in Sero Khanzadyan's historical novels"

Dissertation to obtain the degree of Doctor of Philology with the Speciality of

10.01.02 – "Modern Armenia Litarature"

The defens will take place on 27.11, in 2015 at 12^{30},
In the specialized Council 003 of "Armenian and Foreign Literature"at the Institute of Literature of National Academy of Science after M.Abegyan.

Adress: 15 Grigor Lusavorich, Yerevan

The research subject of <<Time in Sero Khanzadyan's historical novels>> are historical novels / Mkhitar Sparapet, Speak, Armenian mountains, Armenian queen, Shushi, Andranik, Garegin Njdeh/, that form the main part of the writer's rich literary heritage, researches and printed articles about them. The aim of this work is to characterize the category of time in famous writer's historical prose, to show Khanzadyan's sharpened intuition of time, putting forward a problem of comprehension of the author's comments about history lessons, history's philosophy from the point of view of our days. As time and distance are connected to each other, that's why we try to show their unity in Khanzadyan's historical novels, which has structural functions and includes not only content, but also formal-structured elements of literary-art works, its influence on the composition and logic of the structure.

In the first chapter we touch upon the novels, where the actions take place in the first and last quarters of the 18th century including large regional districts /Mkhitar Sparaept, Shushi/ . In these novels the events in Syunik and Artsakh in 18th century are described, but these actions were spread and developed in different provinces of Armenia, even reached to Turkey and Iran, Middle East, Apsheron Peninsula, North Caucasus, St.-Petersburg and elsewhere.

In all the novels we can see the time category with its different dimensions , with its <<open>> and <<closed>> shows, in one case the real and historic times are the same, in another case we can see different streams of time. .In these novels the process of spreading of actions are conditioned by time.

In Chapter 1 we show the specific role of time and distance in the development of strong personalities. The main images of the novels are created by time, and that time made them heroes for the difficult war of liberation and independence.

In Chapter 2 we study the novels describing the Armenian genocide in 1915 / Speak, Armenian mountains, Andranik/ , where the actions include not so long period / 2 decades of the 20th century/, but it shows that our neighbours the Turks have been bandit, bloody, spiteful, swindler not only in our days, but also long ago. In these novels the author shows the Armenians fight for freedom in Artsakh. And history teaches that our nation should rely only on himself, and this is the main truth for Armenians in their struggle against their enemies.

The Chapter 3 is about one of the masterpieces of the Armenian historical novels <<Armenian queen>>. It is about the events in Hayasa many centuries ago. The author's aim is to discover the genetics of Armenians, to describe life and traditions in Hayasa, which had been the most strong and rich country in East. Here we know about the historical events and connections between Hayasa and Armenia, all traditions, customs in Hayasa and the same in present Armenia. All this prove that Hayasa had been homeland of Armenia.As a result of the examination of the theme "Time in historical novels" by Sero Khnazadyan we came to the following conclusions:

- In his historical novels continuing the traditions of Armenian historical classical novelism, S.Khanzadyan tries to reveal "the inner function" of time and interpret its movement from the point of authentic historicity. From modern point of view giving a meaning to the struggle for existence of Armenian people in different phases of historical advance, S.Khnazadyan makes deeper the concept of "Armenian Way " which has been and remains the corner- stone of our ideology.

- In historical novels by S.Khanzadyan the time is presented by the most different measurements, by its "open" and "closed" manifestations. In one case there coincide the historical and fiction time, in the other case different flows of time are included. In this novels the procedure of unfolding actions is considerably conditioned by the time factors which indicate the directions of time, push forward the leaders of struggle for existence, unite the potential of people, reveal its inflexible spirit and will-power.

- In historical novels by S. Khanzadyan the time includes not only the parts of the individual and people but also little but important events. In his historical novels the time borders include the culminating points of events of certain phases of our history, the lifetimes of heroes in that context. The sharp feeling of time enables S.Khanzadyan to present the geopolitical,social developments, the moral psychological atmosphere, the contour, the customs and traditions of different time periods through the prism of overall logic and continuity of the struggle for existence.

- Touching upon a definite historical period S.Khanzadyan tries to harmonize the great and minor events happened in the past to those ongoing now, to bring such historical and cultural, moral and psychological values into fiction area which passing through experiences of centuries are modern now.

- Including the life- loving aspirations of peoples in time duration of the novel, S.Khanzadyan tries to reach " the edge " of historical period through combining understanding and situations to present historical

and fiction heroes in a definite period describing them according to the choice of ‘’ Armenian Way ” through their perceptions, which at the core of conflicts and problems arising from the main one.

- Both historical and fiction characters of Khanzadyan were born with time. It is the time that makes them a hero, induces them to self-sacrifice, and takes them into element. S.Khanzadyan presents those characters in two parallels; through the features of history-hero, time-hero creating a particular link between the historical past and present.

- In his novels presenting the heroic and tragic events of Armenian history S.Khanzadyan strictly gives prominence not only to the glorious victories of our people but also to the fact that the strength of the country is also conditioned by the depth and width spiritual struggle.

- The historical lessons developed in historical novels by S.Khanzadyan are wise commandments to rely on your own power, to keep national identity, to face various challenges and are modern in nowadays. One can confidently claim that historical novels by S.Khanzadyan apart from presenting the panorama of certain historical periods with gnosiological depths are important events of 1960-1990s in abundance of historical novelism.